ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1.

2021թ. օգոստոսի 31-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2021-22 ուս.տարվա տարեկան ծավալ-ծանրաբեռնվածության հարցի քննարկում.
2. 2021-22 ուս.տարվա էլեկտրոնային դասընթացների և 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում.
3. 2021-22 ուս.տարվա 1-ին կիսամյակի դասացուցակի հաստատում.
4. Կորոնավիրուսային համաճարակի սրմամբ պայմանավորված համաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ հարցը
5. Կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումների և առաջարկությունների վերաբերյալ ԱԲ, ԱԻ և ՔՊ ամբիոնի համատեղ կարծիքի տրամադրման հարցը
6. COVID-19-ի հիմնահարցերի վերաբերյալ մասնագիտական սեմինարի անցակցման ձևաչափի և ժամկետների քննարկում

ԼՍԵՑԻՆ – 2021-22 ուս.տարվա տարեկան ծավալ-ծանրաբեռնվածության քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պ/կ Ն.Սահակյանը ներկայացրեց 2021-2022 ուս.տարվա ամբիոնի ծավալ ծանրաբեռնվածության և դասաբաշխման հաստատված տարբերակը, որը հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներից հետո կփոփոխվի, բայց հաստիքակազմի փոփոխություններ չեն լինի: Ամբիոնի ընդհանուր ժամաքանակը 6160 ժամ է, որից թափուր է մնացել 1418 ժամ: Ամբիոնի 4742 ժամը բաշխվել է 8 դասախոսների վրա, միջին ծանրաբեռնվածությունը հաշվարկվել է 790 ժամով: Ամբիոնի հաստիքակաչափում եղել են փոփոխություններ՝ կապված ուսանողների թվաքանակի հետ: Հաստիքաչափը կրճատվել է 0,75 հաստիքով: Ամբիոնի դասախոս գ/թ պրոֆ.պ. Հակոբ Մանուկի Գրիգորյանը կրճատվել է 0,25 հաստիքով, ամբիոնի դասախոս Պերճ Արամի Կարապետյանը՝ 0,5 հաստիքով: Նախորդ տարվա ամբիոնի 6,75 հաստիքը դարձել է 6 հաստիք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2,3 – 2021-22 ուս.տարվա էլեկտրոնային դասընթացների բացման, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկման և 1-ին կիսամյակի դասացուցակի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն. Սահակյանը նշեց, որ սկսվել է 1-ին կիսամյակի էլեկտրոնային դասընթացների ստեղծման գործընթացը և սեղմ ժամկետներում պետք է տեղադրվեն 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, հրավիրվեն ուսանողները, ինչպես նաև ներբեռնվեն դասախոսությունները: Ն.Սահակյանը անդրադարձավ նաև առաջին կիսամյակի դասացուցակին և նշեց, որ դասացուցակի վերջնական տարբերակը պատրաստ է, լսարանային ֆոնդը բաշխված է, բոլոր ֆակուլտետների հետ ձեռք է բերվել համաձայնություն, համալսարանում պարապմունքները կազմակերպվելու առերես:

ՈՐՈՇԵՑԻՆ – Էլեկտրոնային դասընթացներում հաստատել 2021-2022 ուս.տարվա առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները և առաջին կիսամյակի դասացուցակը:

ԼՍԵՑԻՆ 4 –. Կորոնավիրուսային համաճարակի սրմամբ պայմանավորված համաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ հարցը.
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Քննարկվեց ախտահանման գործընթացի, ինչպես նաև անձնակազմի ջերմաչափման արդյունքների, անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության, անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումային կարգավիճակի և բժշկական հակացուցումների վերաբերյալ գրանցամատյանների վարման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 5. –.Կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումների և առաջարկությունների վերաբերյալ ԱԲ, ԱԻ և ՔՊ ամբիոնի համատեղ կարծիքի տրամադրման հարցը.
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի բոլոր անդամներին տեղեկացվեց այն մասին, որ մինչև սեպտեմբերի 25-ը գրավոր ներկայացնել առաջարկություններ և մասնագիտական հիմնավորումներ Առողջապահության Նախարարության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող հրամանի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 6. – COVID-19-ի հիմնահարցերի վերաբերյալ մասնագիտական սեմինարի անցակցման ձևաչափի և ժամկետների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Քննարկվեց բուհի անձնակազմին ԱՆ կողմից ներկայացվող պահանջների մանրամասնություններին ծանոթացնելու, ինչպես նաև հրամանում ներառված մասնագիտական դրույթների պարզաբանման համար ԱԲՕ, ԱԻ և ՔՊ ամբիոնի կողմից 2021թ սեպտեմբերի 15-ին սեմինար հրավիրելու հարցը, որտեղ ամբիոնի մասնագետների կողմից կներկայացվեն և կքննարկվեն հրամանում սահմանված մասնագիտական դրույթները և կտրվել հրամանում տեղ գտած բժշկական հակացուցումների, մասնավորապես բացարձակ և ժամանակավոր հակացուցումների բնութագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2.

2021թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԱԲՕ, ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրությունների արդյունքների ներկայացում.
2. ԱՆ Հիվանդությունների վերահսկման եվ կանխարգելման ազգային կենտրոնի կողմից ներկայացված կորոնավիրուսային համաճարակի վերաբերյալ հրամանի քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Առաջին բուժօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրությունների արդյունքների մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսական անձնակազմին տեղեկացրեց, որ սեպտեմբերի 10-ին կայացած գիտ.խորհրդի օրակարգում դրված էր Առաջին բուժօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչի ընտրության հարցը և քվեարկության արդյունքների ձայների մեծամասնությամբ Ն.Սահակյանը ընտրվեց ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – ԱՆ Հիվանդությունների վերահսկման եվ կանխարգելման ազգային կենտրոնի կողմից ներկայացված կորոնավիրուսային համաճարակի վերաբերյալ հրամանի հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչի կողմից ներկայացվեց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 17-Ն հրամանը: Ներկայացվեց, որ ըստ հրամանի բուհի պրոֆեսորադասխոսական և վարչատնտեսական անձնակազմը, բացառությամբ ուսանողների, պետք է տրամադրի տվյալներ՝ կորոնավիրուսային հինվանդության դեմ պատվաստման սերտիֆիկատ, կամ դրանից հրաժարվելու դեպքում՝ ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ: Այս առումով ֆակուլտետներում, դրանց համապատասխան ամբիոններում, առանձին վարչական

ստորբաժանումներում, էլեկտրոնային ձևաչափով պետք է լրացվեն 2 գրանցամատյաններ՝ անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության վերաբերյալ կամ (COVID-19) դեմ պատվաստումային կարգավիճակի և բժշկական հակացուցումների վերաբերյալ: Տեղեկացվեց, նաև, որ կրթության էլեկտրոնային կառավարման վարչության կողմից արդեն իսկ բոլոր ստորաբաժանումներին ուղարկվել են գրանցամատյանների ձևաչափերը, փաստելով նաև, որ սեմինարի ընթացքում կիրականացվի գրանցամատյանների բովանդակության, լրացման ձևաչափի և իրականացման եղանակների տեղեկատվության տրամադրում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3.

2021թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի առցանց նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԱՆ կողմից ներկայացված հրամանի՝ Կորոնավիրուսային համաճարակի տարածման կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումների վերաբերյալ բուհի ֆակուլտետներից ներկայացված առաջարկների քննարկում
2. ԱԲ, ԱԻ և ՔՊ ամբիոնի մասնագիտական դիտարկումներն ու առաջարկությունները ԱՆ կողմից ներկայացված հրամանին
3. Ավարտական աշխատանքների վերնագրերի և թեմաների քննարկում
4. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հոդվածների ներկայացման չափանիշների վերաբերյալ հարցի քննարկում

ԼՍԵՑԻՆ – ԱՆ կողմից ներկայացված հրամանի՝ Կորոնավիրուսային համաճարակի տարածման կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումների վերաբերյալ բուհի ֆակուլտետներից ներկայացված առաջարկների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն. Սահակյանը տեղեկացրերց, որ ԱՆ կողմից ներկայացված հրամանը քննարկվել է բուհի պրոֆեսորադասախոսական և վարչատնտեսական աշխատակազմի հետ, որի ընթացքում վերջիններիս կողմից բարձրացվել են բազմաթին հարցեր կապված հրամանից բխող առողջապահական խնդիրների և դրանց իրավական հետևանքների վերաբերյալ և ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

Հարկ ենք համարում նշել, որ առաջարկությունները տրամադրվել են բուհի 10 ֆակուլտետների և համապատասխան ամբիոնների կողմից: Առաջարկությունների քննարկման և վերլուծման արդյունքում ներկայացված են դրանց առանցքային կողմերը:

1. ՊՇՌ թեստի 14 օրը մեկ հանձնելու պարտադրանքը ֆինանսատնտեսական տեսանկյունից հանդիսանում է հսկայական բեռ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վրա: Այս առումով ՊԴԱ կողմից առաջարկվում է հնարավորության դեպքում կոլլեկտիվ թեստավորման հայտ ներկայացնել որևէ բուժհաստատություն և ստանալ կորպորատիվ առաջարկ մատչելի տարբերակով թեստավորումը անցկացնելու համար:

2. Հնարավորության դեպքում ՊՇՌ թեստավորման գործընթացը կազմակերպել բուհում, որտեղ աշխատակիցները կկարողանան ոչ աշխատանքային ժամերի հաշվին, համապատասխան թեստավորում անցնել: Աշխատակիցները դեմ են հանգստյան օրերը անցկացնել լաբորատորիաներում:

3. Հնարավորության դեպքում համալսարանում ներդնել պատվաստման պրակտիկա՝ ապահովել շարժական լաբորատորիաներով պատվաստումն տեղում իրականացնելու համար:

4. Ֆակուլտետներում և ամբիոններում աշխատակիցների մեծամասնության կողմից առաջարկվում է հնարավորության դեպքում համալսարանի արհեստակցական միության անդամակցության գումարը ուղղել թեստավորման վճարմանը:

5.Որոշ ֆակուլտետների կողմից առաջարկվել է ուսումնական գործընթացը կազմակերպել առցանց ձևաչափով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Առաջին բուժօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնի մասնագիտական դիտարկումներն ու առաջարկությունները ԱՆ կողմից ներկայացված հրամանի վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ն. Սահակյանը ներկայացնելով ամբիոնի մասնագիտական կարծիքը, մասնավորապես նշեց, որ՝ ԱԲ, ԱԻ ՔՊ ամբիոնը հետամուտ լինելով կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, միանգամայն ըմբռնելով պատվաստման խիստ անհրաժեշտությունը, վերջինիս գլխավոր նպատակը համարելով մահացության և հիվանդության ծանր ու ծայրահեղ ծանր ընթացքի բացառումը, միևնույն ժամանակ ԱՆ-ը առաջարկել է հնարավորության սահմաններում վերանայել հետևյալ դրույթները՝

1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմում քրոնիկ հիվանդությունների լայն ներկայացվածությունը և դրանց սրացումների պարագայում ՊՇՌ թեստի 14 օրը մեկ հանձնելու պարտադրանքի հանգամանքը դառնում է անխուսափելի: Հետևաբար առաջարկում ենք վերանայել հրամանում ներառված ժամանակավոր հակացուցումների՝ քրոնիկ հիվանդությունների դրույթը՝ հստակ սահմանելով դրանց ցանկը:Տեղեկացնում ենք, որ արդեն իսկ, որոշ առողջության առաջնային պահպանման կենտրոնների կողմից մերժվել է քրոնիկ հիվանդությունների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը: Հակառակ դեպքում անորոշ ձևակերպումները կառաջացնեն կոռուպցիոն ռիսկեր:

2. Գտնում ենք, որ բժշկական ժամանակավոր հակացուցումը հավաստող տեղեկանքը կարող է տրամադրվել ոչ միայն առողջության առաջնային պահպանման կենտրոնների, այլ նաև այն ԲԿ-ի կողմից, որտեղ բուժվել և հետազոտվել է տվյալ անձը: Կարծում ենք, որ այս առումով հրամանի նշված դրույթները վերանայման կարիք ունեն, հակառակ դեպքում ևս առկա են կոռուպցիոն ռիսկեր:

3.Վերանայել բնական վարակի միջոցով օրգանիզմում հակամարմինների առկայությունը փաստող բժշկական տեղեկանքը որպես հիմք չընդունելու դրույթը

ՈՐՈՇԵՑԻՆ - կոլեկտիվ թեստավորման հայտ ներկայացնել որևէ բուժհաստատություն և ստանալ կորպորատիվ առաջարկ մատչելի տարբերակով թեստավորումը անցկացնելու համար:

ԼՍԵՑԻՆ 3. – Ավարտական աշխատանքների վերնագրերի և թեմաների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ն.Սահակյանը դասախոսներին տեղեկացրեց, որ 2021-22 ուս. տարվա ծանրաբեռնվածությամբ ամբիոնը կենսաբանություն մասնագիտության ավարտական կուրսերում ունի 6 ուսանողի ավարտական աշխատանքի ղեկավարում՝ դասախոսներ Ա.Մարգարյանի, Գ.Մուշեղյանի և Գ.Արաջյանի մոտ և 1 մագիստրոսական թեզի ղեկավարում Ն.Սահակյանի մոտ: Քննարկումներից հետո որոշեցին հաստատել և ներկայացնել համապատասխան ֆակուլտետի խորհրդի նիստին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-22 ուս.տարվա ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ 4. – Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակած հոդվածների, գիտաժողովի նյութերի, գրքերի, ձեռնարկների մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը դասախոսներին տեղեկացրեց, որ մինչև հոկտեմբերի 15-ը համալսարանի գիտահետազոտական կենտրոն պետք է ներկայացվեն 2021 թ. ընթացքում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված հոդվածների, գիտաժողովի նյութերի, գրքերի, ձեռնարկների մասին տեղեկատվություն, ցանկում կարող են նշել նաև այն հոդվածները, որոնք ներկայացման պահին հրատարակված չեն, սակայն մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը հրատարակվելու են: Առաջարկվեց սեղմ ժամկետներում դրանք էլեկտրոնային տարբերակով ուղարկել ամբիոնի մեյլին՝ հատուկ մշակված ձևաչափում տեղադրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4.

2021թ. հոկտեմբերի 19-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ՀՀ ԱՆ կողմից կորոնավիրուսային համաճարակի կանխարգելմանն ուղղված հրամանում տեղ գտած փոփոխությունների քննարկում և 2020թ օգոստոսի N 17-Ն հրամանով սահմանված ներքին կարգապահության կանոններում պատասխանատվության միօրինակ միջոցներ կիառելու մասին հրամանի ներկայացում.
2. ՀՊՄՀ-ում ԲԻՈՄԵԴ լաբորատորիայի կողմից իրականացված ՊՇՌ հետազոտությունների արդյունքների քննարկում.
3. ՀՊՄՀ-ի ռեկտորի հանձնարարականների քննարկում և ներկայացում՝ կապված ամբիոնի, ինչպես նաև ամբիոնի առանձին դասախոսների գիտական գործունեության և գիտական ծրագրերի շրջանակների հետ.
4. Բուհի 100 ամյակին ընդառաջ ամբիոնի կողմից առաջարկվող միջացառումների բովանդակության և կառուցվածքի քննարկում.
5. COVID-19 համավարակի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական սեմինար կազմակերպելու մասին հարցը.
6. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ներկայացված գիտական հոդվածների քննարկում.

ԼՍԵՑԻՆ – ՀՀ ԱՆ կողմից կորոնավիրուսային համաճարակի կանխարգելմանն ուղղված հրամանում տեղ գտած փոփոխությունների մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ ԲԻՈՄԵԴ լաբորատորիայի կողմից համալսարանում հոկտեմբերի 11-ին և 12-ին տեստավորվել է 361 աշխատակից, որոնց արդյունքները հոկտեմբերի 13-ին էլեկտրոնային տարբերակով ուղարկվել են բոլոր ստորաբաժանումներին և տվյալները լրացվել են գրանցամատյաններում: Ն.Սահակյանը նշեց նաև, որ գրանցամատյաններում տվյալների լրացման գործընթացը վերահսկում է տվյալ ստորաբաժանման ղեկավարը և ինքն է պատասխանատուն գրանցամատյաններում տեղ գտած բացթողումների համար: Ն.Սահակյանը նշեց նաև, որ կորոնավիրուսային համաճարակի կանխարգելմանն ուղղված հրամանում տեղ են գտել փոփոխություններ, որի

համաձայն հեռավար ուսուցմամբ պարապող դասախոսը ազատվում է ՊՇՌ հետազոտությունից և սերտիֆիկատ կարող է ներկայացնել աշխատանքի ներկայանալուց 1 օր առաջ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – ՀՊՄՀ-ի ռեկտորի հանձնարարականների քննարկում՝ կապված ամբիոնի ինչպես նաև ամբիոնի դասախոսների գիտական գործունեության և գիտական ծրագրերի շրջանակների հետ.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը նշեց, որ ռեկտորի համձնարարականով ամբիոնը պետք է ներկայացնի գիտական և գիտահետազոտական գործունեության ծրագիր և դասախոսներին հանձնարարեց սեղմ ժամկետներում ներկայացնեն իրենց մասնագիտական գիտական հետազոտությունների վերլուծությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – Բուհի 100 ամյակին ընդառաջ ամբիոնի կողմից առաջարկվող միջացառումների բովանդակության և կառուցվածքի քննարկում.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ ՀՊՄՀ 100 ամյակին ընդառաջ բուհում նախատեսվում են տարբեր միջոցառումներ, այդ թվում կոնֆերանսներ, սեմինարներ և ամբիոնը նույնպես նախատեսում է կազմակերպել միջազգային կոնֆերանս COVID-19 համավարակ, Սթրես և Կրթություն խորագրերով: Այդ ուղղությամբ կան տարբեր մտահղացումներ և ամբիոնը պետք է համախմբի իր ուժերը՝ դրանք կյանքի կոչելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 4. – COVID-19 համավարակի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական սեմինար կազմակերպելու մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի անձնակազմին տեղեկացրեց, որ COVID-19 կանխարգելմանն ուղղված նպատակահարմար է գտնում կազմակերպել տեղեկատվական սեմինար և բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ բժիշկ-համաճարակաբան, ԵՊԲՀ համաճարակաբանության ամբիոնի դոցենտ, բժշկական գիտությունների դոկտոր Մերի Տեր-Ստեփանյանի հետ՝ բուհի

աշխատակիցների հետ հանդիպում կազմակերպելու համար: Ամբիոնի դասախոսական անձնակազմը ողջունեց Ն.Սահակյանի առաջարկությունը և նշեցին, որ նման հանդիպումը շատ օգտակար և կարևոր կլինի համալսարանի բոլոր աշխատակիցների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 5. – Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ներկայացված գիտական հոդվածների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ մինչև նոյեմբերի 15-ը համալսարանի գիտահետազոտական կենտրոն պետք է ներկայացվեն 2021 թ. ընթացքում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված հոդվածների, գիտաժողովի նյութերի, գրքերի, ձեռնարկների մասին տեղեկատվություն, կարող են նշվել նաև այն հոդվածները, որոնք ներկայացման պահին հրատարակված չեն, սակայն մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը հրատարակվելու են: Առաջարկվեց սեղմ ժամկետներում դրանք էլեկտրոնային տարբերակով ուղարկել ամբիոնի էլեկտրոնային էջին՝ հատուկ մշակված ձևաչափում տեղադրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5.

2021թ. նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ն.Սահակյանի հաղորդումը ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ա.գ.դ.,պրոֆեսոր Ա.Վ.Խոեցյանի թեկնածությունը համալսարանի ռեկտորի պաշտոնում առաջադրման հարցի վերաբերյալ.
2. 2021-22 ուս.տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակի հաստատման հարցը.
3. 2021-22 ուս.տարվա 2-րդ կիսամյակի էլեկտրոնային տեղեկագրերի և դասընթացներում էլեկտրոնային մատյանների լրացման կարգի վերաբերյալ հարցը.

ԼՍԵՑԻՆ – Ն.Սահակյանի հաղորդումը ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ա.գ.դ.,պրոֆեսոր Ա.Վ.Խոեցյանի թեկնածությունը համալսարանի ռեկտորի պաշտոնում առաջադրման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը, Մ. Իսաջանյանը, Հ. Գրիգորյանը, Գ. Մուշեղյանը, Պ. Կարապետյանը, Գ. Արաջյանը, ովքեր նշեցին, որ Ա. Խոեցյանի ղեկավարությամբ իրականացվում են ուսումնակրթական և ուսումնագիտական գործընթաների զարգացմանն ուղղված առանցքային աշխատանքներ, որոնք բխում են համալսարանի առաջնահերթություններից և միտված են դրանց որակի բարձրացմանն ու բարելավվմանը: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը անրադարձավ նաև Ա. Խոեցյանի մարդկային հատկանիշներին՝ արձանագրելով սրտացավ և հարգալից վերաբերմունքը աշխատակիցների նկատմամբ: Արտահայտվողները խիստ կարևորեցին Ա. Խոեցյանի ուսումնական, գիտական և մանկավարժական գործունեության երկար տարիների փորձը և ողջունեցին ռեկտորի պաշտոնում Ա. Խոեցյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնում առաջադրել ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, ա.գ.դ.,պրոֆեսոր Ա. Խոեցյանի թեկնածությունը:

ԼՍԵՑԻՆ 2. – 2021-2022 ուս.տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը ներկայացրեց 2021-22 ուս.տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակը, նշեց, որ պարապմունքները կազմակերպվելու են առցանց տարբերակով, բացված են էլեկտրոնային դասընթացները, հրավիրված են համապատասխան ֆակուլտետի ներկայացուցիչը, դասավանդող դասախոսները և ուսանողները: Հանձնարարեց էլեկտրոնային դասընթացներում տեղադրել առաևկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, միջանկյալ ստուգման թեմաները, գնահատվող էլեկտրոնային հանձնարարության թեմաները և ժամկետները: Հետևել, որ գնահատվող առաջադրանքի գնահատականները անպայման ուղարկվեն բոլոր ուսանողներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – 2021-22 ուս.տարվա 2-րդ կիսամյակի էլեկտրոնային տեղեկագրերի և դասընթացներում էլեկտրոնային մատյանների լրացման կարգի վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ գնահատման համակարգի էլեկտրոնային տեղեկագրերում կան չլրացված տեղեկագրեր, առաջարկեց սեղմ ժամկետներում լրացնել բացթողումները: Անդրադարձավ նաև էլեկտրոնային մատյաններում հաճախումների վերաբերյալ նշումներ կատարելու վերաբերյալ հարցին, հորդորեց անպայման նշել բացակայությունները, գնահատման համակարգում տվյալները մուտքագրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6.

2021թ. դեկտեմբերի 8-ին ժամը 14:30-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առողջապահության նախարարության սահմանած կարգի՝ յուրաքանչյուր 7 օրը մեկ գործատուին ներկայացվող ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատի վերաբերյալ հարցի քննարկում.
2. Հեռակա ուսուցման կուրսերում դասընթացների կազմակերպում՝ դասացուցակներ և խորհրդատվություններ.
3. Բուհի 100 ամյակին նվիրված գիտաժողովի, գիտական նստաշրջանների կազմակերպման վերաբերյալ հարցի քննարկում.
4. Ավարտական և մագիստրոսական աշխատանքների քննարկում և ներկայացում ղեկավարների կողմից
5. 2021թ. տարեկան հաշվետվության հաստատում.

ԼՍԵՑԻՆ – Առողջապահության նախարարության սահմանած կարգի՝ յուրաքանչյուր 7 օրը մեկ գործատուին ներկայացվող ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատի վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը ներկայացրեց ԱՆ կողմից սահմանված կարգը՝ յուրաքանչյուր 7 օրը մեկ ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատի վերաբերյալ, որտեղ նշվում է, որ ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն իր ֆինանսական միջոցների հաշվին: Ն.Սահակյանը նշեց, որ արդեն իսկ դեկտեմբերի 1-ից ըստ ԱՆ հրամանի (01 դեկտեմբեր 2021թ N 84 - Ն)աշխատակիցների կողմից ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատը ՀՊՄՀ-ում ներկայացվում է 7 օրը մեկ, ինչը ֆինանսական բեռ է հանդիսանում աշխատակիցների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Հեռակա ուսուցման համակարգի 2 կիսամյակի դասացուցակի հաստատման, դասընթացների և խորհրդատվությունների կազմակերպման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը նշեց, որ ուղարկվել է շրջաբերական հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների կազմակերպման ժամկետների վերաբերյալ, որտեղ հստակեցված է ժամանակացույցը և ուսուցման ձևաչափը՝ առցանց և առերես:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – Բուհի 100 ամյակին նվիրված գիտաժողովի, գիտական նստաշրջանների կազմակերպման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը նշեց, որ համալսարանի 100-ամյա տարելիցին նվիրված բուհում նախատեսվում են միջոցառումներ, միջազգային և հանրապետական կոնֆերանսներ, գիտաժողովներ: Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին առաջարկեց մասնակցել այդ միջոցառումների ծրագրին, որոշել միջոցառման տեսակը, խորագիրը, ժամկետը, մշակել ծրագիր: Առաջարկվեց անցկացնել միջազգային կոնֆերանս էկոլոգիայի ամբիոնի հետ համատեղ, հրավիրել նաև միջազգային մասնագետների, հրավերներ ուղարկել Սթրես կենտրոն, գիտահետազոտական ինստիտուտներ, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա, Թբիլիսիի և Մոսկվայի համալսարանների ֆիզիոլոգիայի ամբիոններ, Դաղստանի Մախաչկալայի ֆիզիոլոգիայի ինստիտուտ: ֆինանսական և տարածքային խնդիրներից խուսափելու համար Ն.Սահակյանը առաջարկեց ընտրել նաև առցանց ձևաչափը: Նախնական խորագիր ընտրվեց ,,Covid 19 համավարակ, Սթրես,Կրթություն,,տարբերակը: Առաջարկվեց նաև կազմակերպել ուսանողական գիտական գիտաժողով, որին կմասնակցեն բուհի ուսանողները և նախկին շրջանավարտները ,,Աղետներ, Համաճարակներ, Հանրային առողջություն,, խորագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 4. Ավարտական և մագիստրոսական աշխատանքների քննարկման և 2021թ. տարեկան հաշվետվության հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ելույթ ունեցան Գ.Արաջյանը, Գ.Մուշեղյանը և Ա.Մարգարյանը, նշելով, որ աշխատանքները ընթացքի մեջ են,փորձերը կատարվում են: Ն.Սահակյանը առաջարկեց դեկտեմբերի երկրորդ կեսին կրկին հանդիպել և լսել ուսանողների հաշվետվությունը կատարված աշխատանքների վերաբերյալ: Ն.Սահակյանը ներկայացրեց նաև 2021թ. տարեկան հաշվետվության նախնական տարբերակը, որտեղ սահմանված ձևաչափի համապատասխան նշված են հաշվետու տարում ամբիոնի կատարած աշխատանքների

ծավալը, հրատարակած հոդվածների, կազմակերպած սեմինարների, միջոցառումների մասին տրված է լիարժեք տեղեկատվություն և ներկայացրեց քննարկման:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7.

2021թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ավարտական և մագիստրոսական աշխատանքների ներկայացում ուսանողների կողմից
2. Հեռակա ուսուցման համակարգի էլեկտրոնային դասընթացների, առարկայական նկարագրերի և 1-ին կիսամյակի դասացուցակի հաստատում
3. Կորոնավիրուսի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին ամփոփիչ հաշվետվություն

ԼՍԵՑԻՆ – Ուսանողների կողմից կատարված ավարտական և մագիստրոսական աշխատանքների համառոտ վերլուծության հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ելույթ ունեցան կենսաբանություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Գևորգյան Իրինան, /ղեկավար Ն.Սահակյան/, 4 կուրսի ուսանողներ Կարապետյան Մերին /Գ.Արաջյան/ և Գևորգյան Աննան /Գ.Մուշեղյան/, ինչպես նաև հեռակա 5-րդ կուրսի ուսանողուհիներ Բեգլարյան Մերին և Հայրումյան Սուսաննան /Ա.Մարգարյան/: Ուսանողները ներկայացրեցին իրենց ավարտական աշխատանքների համառոտ բովանդակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել աշխատանքները:

ԼՍԵՑԻՆ 2. – Հեռակա ուսուցման համակարգի էլեկտրոնային դասընթացների, առարկայական նկարագրերի և 1-ին կիսամյակի դասացուցակի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ ավարտվել է հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի էլեկտրոնային դասընթացների ստեղծման գործընթացը, սեղմ ժամկետներում պետք է տեղադրվեն 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերը, հրավիրվեն ուսանողները և ներբեռնվեն դասախոսությունները: Ն.Սահակյանը ներկայացրեց 1-ին կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակը, նշեց, որ դասերը

անցկացվելու են հիբրիդային եղանակով, առցանց և առերես, ֆակուլտետների փոխդեկանների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն լսարանային ֆոնդի հետ կապված:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

ԼՍԵՑԻՆ 3. – Կորոնավիրուսի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին ամփոփիչ հաշվետվությունը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Անդրադառնալով Կորոնավիրուսի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումներին, Ն.Սահակյանը նշեց, որ բուհը այլևս չի կազմակերպելու ՀՊՄՀ աշխատակակիցների կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության գործընթաց՝ կապված ԱՆ (01 դեկտեմբեր 2021թ.N84 - Ն) հրամանի հետ, և 7 օրը մեկ աշխատակիցների ՊՇՌ բացասական թեստ պահանջելու պասասխանատվությունը դրվելու է յուրաքանչյուր ստորաբաշանման ղեկավարի վրա: Ընդհանուր առմամբ պատվաստված է բուհի աշխատակիցների մոտ 90%-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝	Ն.Ա.Սահակյան
Նիստի քարտուղար՝	Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8.

2022թ. փետրվարի 4-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2021-2022 ուս.տարվա. 2-րդ կիսամյակի դասացուցակի հաստատում.
2. 2021-2022 ուս.տարվա. 2-րդ կիսամյակի էլեկտրոնային դասընթացների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի հաստատում.
3. 2021-2022 ուս.տարվա հեռակա ուսուցման համակարգի ժամանակացույցի քննարկում.
4. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովների շրջանակներում հոդվածների տպագրության համար աշխատանքային խմբի ձևավորում.

ԼՍԵՑԻՆ – 2021-2022 ուս.տարվա. 2-րդ կիսամյակի դասացուցակի և էլեկտրոնային դասընթացներում առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց 2021-2022 ուս.տարվա. 2-րդ կիսամյակի դասացուցակը, նշեց, որ դասերը սկսվելու են փետրվարի 9-ից, բայց կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված նախատեսվում է 2 շաբաթ ժամանակով պարապմունքները կազմակերպել առցանց կամ հիբիդային տարբերակով: Նշեց, որ էլեկտրոնային դասընթացները բացված են, հրավիրված են դասավանդող դասախոսները և ուսանողները, առաջարկեց սեղմ ժամկետներում տեղադրել նաև առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը և դասախոսությունների փաթեթները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – 2021-2022 ուս.տարվա հեռակա ուսուցման համակարգի ժամանակացույցի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց շրջաբերականը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի 1-ից 5-րդ կուրսերի 2021-2022 ուս.տարվա ուսումնական գործընթացների վերաբերյալ, որի էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է բոլոր

դասախոսներին, որտեղ հստակեցվել է 1-ին և 2-րդ կիսամյակների տեսական դասընթացների, խորհրդատվությունների, ընթացիկ ստուգումների ժամկետները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9.

2022թ. մարտի 2-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100 ամյակին նվիրված գիտաժողովների կազմակերպման հարցերի քննարկում՝
   ա) գիտաժողովների ժամկետների հստակեցում
   բ) գիտաժողովների շրջանակներում տպագրվող հոդվածների ձևաչափերի և հեղինակներին ներկայացվող պահանջների, սահմանում
   դ) գիտաժողովների անցկացման վայրի հստակեցում և կազմակերպում
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների ժամկետների հաստատում.
3. Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա դասընթացի ՝ ուսումնական պլաններ ներառելու մասին հարցը.
4. Առկա համակարգում կարդացվող դասընթացների միջանկյալ քննությունների գրաֆիկի ներկայացում.

ԼՍԵՑԻՆ – Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100 ամյակին նվիրված գիտաժողովների կազմակերպման մասին հարցերը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը անդրադառնալով ՀՊՄՀ-ի 100 ամյակին նվիրված միջոցառումներին, նշեց, որ հունիս ամսին նախատեսվում է անցկացնել ուսանողական գիտական ֆորում ,,Աղետներ, համաճարակներ, հանրային առողջություն և կրթություն,, խորագրով, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի հետ համատեղ, որին կարող են մասնակցել համալսարանի ուսանողներ և շրջանավարտներ և հոկտեմբերին հանրապետական գիտական կոնֆերանս ,,Կովիդ համավարակ, սթրես, կրթություն,, խորագրով, որին կընդգրկվեն հանրապետության բոլոր բուհերը և գիտահետազոտական կենտրոնները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների ժամկետների և Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա դասընթացի՝ ուսումնական պլաններ ներառելու մասին հարցը.

.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ ամբիոնը ունի մեկ մագիստրոսական ատենախոսության (ղեկ.Ն.Սահակյան)և չորս ավարտական աշխատանքի (ղեկ. Ա.Մարգարյան, Գ.Արաջյան, Գ.Մուշեղյան) ղեկավարում: Մագիստրոսական ատենախոսության փորձարարական մասի աշխատանքները ավարտված են, բովանդակային մասը ընթացքի մեջ են: Ելույթ ունեցան նաև Ա.Մարգարյանը,Գ.Մուշեղյանը և Գ.Արաջյանը, նշելով, որ, աշխատանքները պատրաստ են ներկայացվելու նախապաշտպանության: Որոշեցին նախապաշտպանության առաջին փուլը կազմակերպել ապրիլի 18-ին: Անդրադառնալով Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա դասընթացին, Ն.Սահակյանը նշեց, որ առաջարկությամբ դիմել է համալսարանի նորընտիր ղեկավարությանը՝ Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա դասընթացը ուսումնական պլաններում ներառելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10.

2022թ. մարտի 16-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100 ամյակին նվիրված ուսանողական գիտական ֆորումի և հանրապետական գիտաժողովի կազմակերպման վերաբերյալ հարցերի քննարկում՝

   ա) գիտաժողովների ժամկետների հստակեցում

   բ) գիտաժողովների անցկացման վայրի հստակեցում և կազմակերպում

ԼՍԵՑԻՆ – ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված ուսանողական գիտական ֆորումի և հանրապետական գիտաժողովի կազմակերպման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկաներին ներկայացրեց ուսանողական գիտական ֆորումի խորագիրը, նպատակը, ուղղությունները, անցկացման ձևաչափը, վայրը: Նա նշեց, որ միջոցառումը նախատեսվում է անցկացնել հունիսի 22-ին, ՀՊՄՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում, <<Աղետներ, համաճարակներ, հանրային առողջություն և կրթություն>> խորագրով, առերես և առցանց ձևաչափով: Ուսանողական գիտական ֆորումի հիմնական նպատակն է հարթակ տրամադրել ուսանողներին՝ ներկայացնելու իրենց գիտական հետազոտությունները, գաղափարներն ու մտահղացումները: Ֆորումի ուղղություններից են՝ Բնական և տեխնածին աղետներ, Համաճարակներ և ինֆեկցիոն հիվանդություններ, Արտակարգ իրավիճակներ, Հանրային առողջություն, Հոգեբանական և էկոլոգիական անվտանգություն թեմաները: Ֆորումին կարող են մասնակցել ՀՊՄՀ ուսանողներ, հայցորդներ, ասպիրանտներ, ՀՊՄՀ շրջանավարտներ: Մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց տվյալները՝ անուն, ազգանուն, բուհ, ֆակուլտետ, կուրս, զեկուցման վերնագիրը և ուղարկել conference100@aspu.am էլեկտրոնային հասցեով, մինչև մայիսի 30-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11.

2022թ. ապրիլի 28-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԿՔԱ ֆակուլտետի առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողների մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանություն.
2. Բուհի 100 ամյակին նվիրված՝ հունիսի 22-ին կազմակերպվող ուսանողական գիտական ֆորումի վերաբերյալ առանցքային հարցերի քննարկում (անցկացման ժամ, վայր, հրավիրատոմսեր,հավաստագրեր):
3. ԿՔԱ ֆակուլտետի Կենսաբանության, քիմիայի և նրա դասավանդման ամբիոնի կողմից "Նեյրոֆիզիոլոգիա և ԲՆԳ հիմունքներ" դասընթացը, որպես ընտրովի դասընթաց ներառելու հարցը.
4. Ամբիոնի դասախոս Գոհար Արաջյանի ֆիզարձակուրդ գնալու կապակցությամբ իր կողմից կարդացվող դասընթացների վարման կարգի քննարկում:

ԼՍԵՑԻՆ – ԿՔԱ ֆակուլտետի առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողների մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանության ներկայացնելու հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը նշեց, որ ամբիոնը ունի 4 ավարտական աշխատանքի ղեկավարում, 2 առկա ուսուցման համակարգում, 2 հեռակա ուսուցման համակարգում: Ղեկավարներ Ն.Սահակյանը, Գ.Մուշեղյանը և Ա.Մարգարյանը նշեցին, որ բոլոր աշխատանքները պատրաստ են մասնակցելու նախապաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – Բուհի 100 ամյակին նվիրված՝ հունիսի 22-ին կազմակերպվող ուսանողական գիտական ֆորումի վերաբերյալ առանցքային հարցերի քննարկման հարցը (անցկացման ժամ, վայր, հրավիրատոմսեր,հավաստագրեր):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ հայտնի է հունիսի 22-ին կազմակերպվող ուսանողական գիտական ֆորումի մասնակիցների վերջնական ցուցակը, առաջարկեց կազմել

ծրագիր՝ ելույթ ունեցող մասնակիցների թեմաներով, ինչպես նաև կազմել հրավիրատոմսեր և հավաստագրեր: Ինչպես նաև ընկ.Սահակյանը խոստացավ բուհի ղեկավարության հետ համաձայնեցնել անցկացման վայրի հետ կապված հարցերը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – ԿՔԱ ֆակուլտետի Կենսաբանության, քիմիայի և նրա դասավանդման ամբիոնի կողմից "Նեյրոֆիզիոլոգիա և ԲՆԳ հիմունքներ" դասընթացը, որպես ընտրովի դասընթաց ներառելու և ամբիոնի դասախոս Գոհար Արաջյանի ֆիզարձակուրդ գնալու կապակցությամբ իր կողմից կարդացվող դասընթացների վարման մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց, որ Կենսաբանության, քիմիայի և նրա դասավանդման ամբիոնում որպես ընտրովի դասընթաց ներառվել է "Նեյրոֆիզիոլոգիա և ԲՆԳ հիմունքներ" դասընթացը, որը սակայն տարիներ շարունակ դասավանդվել է Առաջին բուժօգնության ամբիոնի մասնագետների կողմից և հատուկ կրթության ֆակուլտետի ուսումնական պլաններում ամրագրված է որպես ամբիոնի կողմից դասավանդվող առարկա, առաջարկեց դիմել ֆակուլտետի դեկանին՝ խնդիրը կարգավորելու նպատակով:Ինչպես նաև ամբիոնի դասախոս Գ.Արաջյանի նախածննդյան արձակուրդ գնալու հետ կապված առաջարկեց Գ.Արաջյանի ուսումնական պարապմունքները հրամանով դնել ամբիոնի դասախոս, դոցենտ Ա.Մարգարյանի վրա

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12.

2022թ. մայիսի 16-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առկա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների վերաբերյալ գիտական կարծիքների և գրախոսությունների մասին հարցի քննարկում.
2. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման համակարգի դասացուցակի հաստատման հարցը.
3. Հունիսի 22-ին կայանալիք ուսանողական գիտական ֆորումի մասնակիցների ելույթների թեմաների քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների վերաբերյալ գիտական կարծիքների և գրախոսությունների քննարկման մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ առկա ուսուցման համակարգում ամբիոնը ունի 2 ավարտական աշխատանքի ղեկավարում, որոնցից մեկը իր ղեկավարությամբ, մեկը Ա.Մարգարյանի: Աշխատանքների համար պահանջվող գիտական կարծիքներն պատրաստ են, ներկայացվող պահանջ է նաև գրախոսությունների առկայությունը, որոնք նույնպես առկա են:

ՈՐՈՇԵՑԻՆ - Աշխատանքները ներկայացնել պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ 2.– 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման համակարգի դասացուցակի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը անդրադառնալով առկա ուսուցման համակարգում 2-րդ միջանկյալ ստուգումների, ստուգարքային աշխատանքի ժամկետներին, հորդորեց հետևողական լինել դրանց անցկացման պահանջներին և ժամկետներին, էլեկտրոնային դասընթացներում ստուգել հարցաշարերի առկայությունը, ինչպես նաև էլեկտրոնային մատյաններում կատարել գրառումներ հաճախումների հետ կապված: Ն.Սահակյանը

անդրադարձավ նաև առաջին կիսամյակի հեռակա ուսուցման հարցին, առաջարկեց ֆակուլտետների հետ համաձայնեցնել իրենց պարապմունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – Հունիսի 22-ին կայանալիք ուսանողական գիտական ֆորումի մասնակիցների ելույթների թեմաների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց գիտական ֆորումի ծրագրի կազմած տարբերակը, որտեղ զետեղված է ժամանակացույցը, ելույթ ունեցողների տվյալները, զեկուցումներով հանդես եկող մասնակիցների անունները և թեմաները, սուրճի ընդմիջման ժամը: Ներկայացված տարբերակը արժանացավ հավանության, որոշեցին ընդունել ի գիտություն:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13.

2022թ. հունիսի 1-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հեռակա ուսուցման դասընթացների և առկա համակարգում քննությունների կազմակերպման հարցը.
2. Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա դասընթացը գործող ուսումնական պլաններ ներառելու մասին հարցը.
3. Հունիսի 22-ին կայանալիք ուսանողական գիտական ֆորումին վերաբերվող համապատասխան հարցերի քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման դասընթացների և առկա համակարգում քննությունների կազմակերպման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը անդրադառնալով հեռակա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի պարապմունքներին ասաց, որ կազմված է դասացուցակը, համաձայնեցված է ֆակուլտետների փոխդեկանների հետ, բացված են էլեկտրոնային դասընթացները, բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարված են և հորդորեց էլեկտրոնային դասընթացներում տեղադրել առարկայական նկարագրերը, փաթեթները և հարցաշարերը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2.– Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա դասընթացը գործող ուսումնական պլաններ ներառելու մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ համապատասխան հիմնավորումներով դիմել է բուհի ղեկավարությանը՝ հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի 1-ին կուրս, 1-ին կիսամյակում դասավանդվող տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա դասընթացը բուհի բոլոր մասնագիտություններում ներառելու առաջարկությամբ, ներկայացնելով դրա կարևորությունը մանկավարժության բնագավառում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14.

2022թ. հունիսի 27-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ն.Սահակյանի կողմից ,,Սովորողների նեյրոֆիզիոլոգիական, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հանրային, ներառական և բարձրագույն կրթության համակարգերում,, թեմայով գիտական հետազոտության պլանը և այն Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի էթիկայի կոմիտեում հաստատման նպատակով օրակարգում ընդգրկելու մասին հարցը.
2. Ամբիոնի դասախոս կենս.գիտ.թեկնածու, պրոֆեսորի/պ. Լիդա Ղազարյանին 2022-2023 ուս.տարում 0,25 հաստիքով ամբիոնի խորհրդատու ներկայացնելու մասին հարցը.

ԼՍԵՑԻՆ – Ն.Սահակյանի կողմից ,,Սովորողների նեյրոֆիզիոլոգիական, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հանրային, ներառական և բարձրագույն կրթության համակարգերում,, թեմայով գիտական հետազոտության պլանը և այն Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի էթիկայի կոմիտեում հաստատման նպատակով օրակարգում ընդգրկելու մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դոցենտներ Մ.Իսաջանյանը, Գ.Մուշեղյանը, Ա.Մարգարյանը, ներկայացնելով գիտական հետազոտության արդիականությունը և վերջինիս կարևորությունը հանրային, ներառական և բարձրագույն կրթության ոլորտում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ներկայացնել Մ.Հերացու անվան ԵՊԲՀ էթիկայի կոմիտե հաստատման:

ԼՍԵՑԻՆ 2. – Ամբիոնի դասախոս կենս.գիտ.թեկնածու, պրոֆեսորի/պ. Լիդա Ղազարյանին 2022-2023 ուս.տարում 0,25 հաստիքով ամբիոնի խորհրդատու ներկայացնելու մասին հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը ներկայացրեց ամբիոնի 2022-2023 ուս.տարվա աշխատանքային ծավալ ծանրաբեռնվածության նախնական տարբերակը, որը պարզ կդառնա ընդունելության արդյունքներից հետո, նշեց, որ նախորդ տարվա համեմատ ամբիոնում կա ժամաքանակի նվազում և հնարավոր է լինեն հաստիքային փոփոխություններ: Հաստիքային փոփոխություններից խուսափելու համար առաջարկեց քվեարկել դիմելու համալսարանի ղեկավարությանը ամբիոնի դասախոս Լիդա Գեորգիի Ղազարյանին նույն հաստիքաչափով ամբիոնի պրոֆեսորի խորհրդատուի պաշտոնում նշանակելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝	Ն.Ա.Սահակյան
Նիստի քարտուղար՝	Մ.Գ.Վիրաբյան